Արձանագրություն N3
ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-49/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր **05.05.2025թ.**
Շահումյան 3 **ժամը 11^{00}**

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Վարդան Գասպարյան
Անդամներ՝ Մարգարիտա Հունոյան
Նաիրա Մուրադյան
Քարտուղար՝ Արմինե Նավասարդյան

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Վարդան Գասպարյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել է «Նատալի ֆարմ» ՍՊԸ, «Ար Ջի ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ մասնակիցներին հայտերում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

Վարդան Գասպարյան

2.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից են ճանաչվում.

- չափաբաժին 5, 6, 10, 15, 21, 26 - «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 30 - «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 28 - «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ն,
- չափաբաժին 33 - «Խաչպար» ՍՊԸ–ն,
- չափաբաժին 2,20 - «Արֆարմացիա» ՓԲԸ-ն,
- չափաբաժին 23 - «Արփիմեդ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 8 - «Զայնա Մոլլ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 32 - «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 3,24 - «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ,
- չափաբաժին 12 - «Իվաֆարմ» ՍՊԸ-ն:

2.2 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 1, 4, 14, 16, 17, 19, 22, 27 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը:

2.3 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 31-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ներկայացվել է հավասար նվազագույն գնային առաջարկներ:

2.4 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 7, 9, 11,13,18,25,29 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ոչ մի հայտ ներկայացվել:

2.5 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վարդան Գասպարյան**

անդամներ՝ **Մարգարիտա Հունոյան**

Նաիրա Մուրադյան

քարտուղար՝ **Արմինե Նավասարդյան**